

1 MAR 2010

368.5

Պ-48

Պրոլետարիատը բոլոր յերկրների, միացէք.

Ազգառազագրությունը միություններ—միությունը՝ ույժ

Գյուղատնտեսական սերիա

ՀՐԱՄԱՆ ԱՌԱՋՐՈՒՄ Ն Յ

* * * * *

Պետական առկանովազբությունը այնպի-
սի դյուրություններ ե առյիս աշխատա-
վոր գյուղացուն, վորի նմանը յերազել
անդամ չեն կարող ուրիշ յերկրների
գյուղացիները, քանի նրանք ել չեն
հաստատել իրենց Խորհրդարին Պետու-
թյունը:

* * * * *

ՊԵՏԱԿԱՆ ԻՆՉ Ե ՎԵՐՑՆՈՒՄ
ԳՅՈՒՂԱՑՈՒՑ

ՅԵՎ ԻՆՉ Ե ՏԱԼԻՍ ՆՐԱՆ

Կազմ. Ա. Վ. Փ.

Խոմք. Ա. Գառամյան

300
1239-6

ՀԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԹԵՏԱՄԻ

ՅԵՐԵՎԱՆ

368.5
Դ-48

Պրուետարներ բոլոր յերկրների, միացեք.
Ապահովագրությունը միություն և -միությունը՝ ույժ

300
1239-6

Գյուղատնտեսական սերիա

*
Պետական ապահովագրությունը այնպի-
սի զյուրություններ և տայխու աշխատա-
վոր զյուղացուն, վորի նմանը լեռազել
անգամ չեն կարող ու բիշ յերկրների
գյուղացիները, քանի նրանք եւ չեն
հաստատել իրենց Խորհրդարին Պետու-
թյունը:

*

ՊԵՏԱՊԸ Ի՞ՆՉ Ե ՎԵՐՑՆՈՒՄ
ԳՅՈՒՂԱՑԻՒՑ
ՅԵՎ Ի՞ՆՉ Ե ՏԱԼԻՍ ՆՐԱՆ

Կազմ. Ե. Գ. — Փ.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԹԵՏԱՄԻ
1924 ՅԵՐԵՎԱՆ

17 JUL 2013

44289

ՊԵՏԱՊԼ ԻՆՉ Ե ՎԵՐՅՆՈՒՄ ԳՅՈՒ- ՂԱՅՈՒՑ ՅԵՎ ԻՆՉ Ե ՏՈԼԻՍ ՆՐԱՆ

Պետական ապահովագրությունը նոր, ջահել գործ է: Պետապլ իր գործը սկսելիս պատրաստի վոչ մի գումար չի ունեցել:

Միութենական կառավարությունը զլիավոր Պետապլն (Մուկվա) 1922 թ. լոներով 500 միլյոն տվեց և խոստացավ մի բան ել տալ այդ տարի գերազանցությունների ժամանակ վասվածներին վճարելու համար:

Առաջվա ապահով. ընկերություններից և Զիմստվաններից Պետապլ վոչ մի գումար չե ստացել, չնայելով, վոր մեր թշնամիները այդպիսի հիմար լուրեր են տարածում:

Ահա այս պայմաններում Պետապլ ստիպված եր սկսել իր աշխատանքները:

Պարզ է, վոր նա պետք ե շատ զգուշ լիներ, իր առնելիքներն ու տալիքները կոպեկ-կոպեկ հաշվեր, վոր գործը սկզբից ամուր հիմքերի վրա դրվեր:

Գործը հաստատուն դառնալուն շատ նպատեց պարտադիր ապահովագրությունը:

Պետապլ միակ յեկտմուտը ապահովագրողներից ստացված ապահովագրարներն են:

Ի՞նչ է ապահովավճարը յեվ ինչպես ե նա

ՅԵՐԵՎԱՆ
ՏՐԵՍՏԻ-Ա.Պ.Ա.ՁԿԵՆ ՏՊԱ.Բ.Ս.
1924

նեսնակվում: Ամեն մի ապրանք (ցանքս, այգի, անասուն, տուն) ապահովագրելու համար նախ և առաջ վորոշում են այն զումարը, վոր Պետապը պարտավորվում է վճարել յեթե այդ ապրանքին մի փորձանք պատահի: Դա կոչվում է ապահովագին (Строховая сумма):

Միևնույն ապրանքի համար ապահովագինը գանգան չափի կորող է լինել: Ապահովագինը կամագոր ապահովագրության ժամանակ վորոշում է ապրանքի տեղը, (ապահովագրողը), պայմանով, վոր ապրանքի իսկական արժեքից ավելի չինի: Պարտադիր ապահովագրության ժամանակ ապահովագինը վորոշում է Պետությունը Պետապի միջոցով:

Որինակ՝ այս տարի Հայաստանի Ժողկությունը անդրկովկասյան Պետապի հետ համաձայնելով հետեւալ ապահովագիներն եր վորոշել բույսերի պարտադիր ապահովագրության համար. հացահատիկների մեկ գեսյաղին 15 ը., բրինձին—20 ը., բարակին—25 ը. այզիներին—30 ը., ծխախոտին—25 ը.:

Ապահովագինը վորոշելոց հետո արդեն պարզ է լինում, թե ապահովագրողը ինչքան պիտի վճարի Պետապին: Այս վորոշը, վոր ապահովագրողը պիտի տա Պետապին, կոչվում է ապահովագինը:

Պետապը սկզբից վորոշել է, թե այս կամ այն ապրանքի ապահովագինի ամեն մի ըուբլու դիմաց

քանի կոպեկ պիտի վերցնի իբրև ապահովագինը: Ուրիշ խոսքով Պետապը ունի իր պատրաստի տարիփը (վճարաչափը):

Վճարաչափը (տարիփը) միևնույն ապրանքի համար ամեն տեղ միևնույնը չե: Մի տեղ քիչ է նշանակված, մի տեղ շատ: Ինչո՞ւ

Դուք դիտեք, վոր, որինակ կարկուտ ամեն տեղ միատեսակ չե: Լեռնային յերկրներում շուտ—շուտ և ուժեղ է լինում, իսկ գաշտային տեղերում ուշ—ուշ և թույլ է լինում: Նշանակում է լեռնային մասերում Պետապը ցանքսերն ապահովագրելիս ավելի մեծ ըիսկ է վերցնում իր վրա, քան գաշտային մասերում:

Բացի այդ, դուք դիտեք նույնպես, վոր կարկուտը տվելի շատ վնաս է տալիս բամբակին, կտավատին, բըինձին, այգիներին, քան կարառֆիին, յեզիպատացորենին կամ հացաբուլսերին: Հետևաբար առաջինները ապահովագրելիս Պետապը ավելի շատ վնասներ տալու բիսկ է անում, քան մյուսների համար:

Ահա այս է պատճառը, վոր նախ ամբողջ Խորհրդային միությունը բաժանված է 5 գոտիների, այսինքն 5 աստիճանի շրջանների, նայելով թե այս կամ այն շրջաննում կարկտի դեպքերը շատ են թե քիչ:

Հայաստանը ընկեր է III-րդ և VI-րդ գոտիների մեջ:

Յերեանի, Դարալաղյազի, Եջմիածնի գավառները III գոտու մեջ են հաշված, վորովհետեւ այդ գավառներում համեմատաբար կարկուտի գեղքերը շատ չեն լինում և ֆւասները շատ մեծ չեն լինում:

Իսկ Նորբայազեղի, Դիլիջանի, Լենինականի, Զանգեզուրի և Լորի-Փամբակի գավառները մանում են IV-րդ գոտու մեջ:

Բացի յերկիրը գոտիների բաժանելուց, Պետապը բույսերն ել բաժանել ե 5 կարգի, նայելով թե կարկուտը ինչպես ե աղդում այս կամ այն բույսերի վրա.

I կարգի բույսեր են՝ յեզիլտացորենը և կորոփիլը:

II կարգի՝ հացաբույսերը (ցորեն, դարի, տարեկան).

III կարգի՝ բրինձ, սիսեռ, լորի վարսակ.

IV կարգի՝ կանեփ, կտավատ քնջիւ, բուտաններ, բամբակ.

V կարգի՝ այդիներ, պաղատու ծառեր, ծխախոտ:

Այս հաշվով Պետապը այս տարի մոտ 150.000 տնտեսություններից պետք է ստանար 122.000 բուրդի, վորը միջին հաշվով անում ե 80 կոտ. ամեն մեկ տնտեսությունից (տնից):

Ինքն ըստինքյան ոս մեծ փող չե. այնուամենայնիվ Խորհրդային իշխանությունը, ինչպես ամեն բանում, այս գործումն ել աշխա-

տում ե ամեն կերպ թեթիացնել աշխատավոր — աղքատ զյուղացու զբությունը: Այս տարի վորովհած եր տպահովավճար տալուց բոլորովին աղատել տնտեսությունների 10^{0/0}-ը ամենաշքավորներից: Բացի այդ՝ ապահովագինը բարձրացրած ե 10^{0/0}-ով, այսինքն գեկրետով նշանակած 15 ր. դարձել ե 16 ր. 50 կ., 30 բուրդին 33 ր. և այն: Միաժամանակ Պետապը հանձն ե առել և այն հեղեղների տված վասները, վոր յեղել են կարկանարության հետ միաժամանակ:

Այս բոլորը պարզ կերպով ցույց են տալիս, վոր Խորհրդայի իշխանության Պետական ապահովագրությունը նախկին ապահովագրություն, ների նման չե. վոր այստեղ շահ ու վաստակ ձեռք բերելու մասին չեն մտածում, այլ իսկական ոգնություն են հասցնում զյուղացի աշխատավոր ժողովրդին:

Այդ ժողովրդի և Խորհրդային պետության թշնամիները թող ինչքան ուզում ե անկյուններում բամբանեն ու ստեր խոսեն: Պետապի կենդանի գործի առաջ նրանց բերանները վերջի վերջո պիտի պապանձվեն:

Իսկ աշխատավոր զյուղացիները պիտի սիրեն Պետապը և ամեն կերպ պիտի աշխատեն ամբաղնդել և պահպանել իրենց սեփական այդ գործը:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԾԱԽՍՎՈՒՄ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ ՀԱՎԱՔՎԱԾ ԱՊԱՀՈՎԱՎՃԱՐՆԵՐԸ

Պետական ապահովագրության գործը Միության համար ընդհանուր է:

Վորքան ել ամեն մի հանրապետության կամ նահանգի Պետապ ազատ ե իր շրջանի ապահովագրության գործի մեջ, բայց նրանց միջոցները, հավաքված դրամները համարվում են ընդհանուր Միության սեփականություն:

Ամեն մի Պետապի իր շրջանի ամբողջ կարիքները հոգալուց հետո ազատ մնացած փողերը արվում են Գլխավոր Պետապի (Մոսկվայի) արքամայրության տակ և նա այդ փողերով ոգնության և հասնում այն շրջանների Պետապին, վորի հավաքած փողերը քիչ են յեղել և նա չել կարողացել իր շրջանի ժողովրդի ապահովագրական վասաները ծածկել:

Գիտենք արգեն, վոր այս տարի Հայաստանում պետք ե հավաքվեր լնդամեն 122,000 ռուբլի, բայց իսկապես մինչեւ այժմ հավաքվել 80,000 ռուբ. մնացածը ապառիկ և մնացել ժողովրդի վրա: Մյուս կողմից կարկտի վասաների համար Հայպետապը պետք ե վճարի 106,000 ր. Նա չի կարող սպասել մինչեւ ապառիկները հավաքելը, վոր վասագածներին վճարի: Նա պետք ե մի տեղից այդ պակաս գումարը, 26,000 ր. ճարի: Այդ ե տալու նրան այդ գումարը: Պարզ

ե, վոր Գլխավոր Պետապը: Նշանակում ե, վոր նա միշտ պետք ե պատրաստի խոշոր գումարներ ունենա այդպիսի դեպքում այս կամ այն Պետապին ոգնելու համար:

1924 թվին, մայիսի 15-ին, Գլխավոր Պետապը (Մոսկվան) իր կասայում ուներ 55,000 ր., ընթացիկ ծախսերը կատարելու համար: Բանկերում պահ եր տված 32,500,000 ր., իսկ առանձին Պետապների մոտ թողնված կար մոտ 9,000,000 ր., գիրքադառնությունների ժամանակ առանց ուշացնելու ոգնությունը հասցնելու համար:

Հայպետապը նոր եր կազմակերպվում այդպիսի պատրաստ գումար ունենալ նա չեր կարող: Նա պետք ե ինքը ոգնություն ստանար Գլխավոր Պետապից, մինչեւ իր վոտքի կանգնելը: Յեկ նա այդ ոգնությունն ստացել ե, առանց վորի անկարելի պետք ե լիներ ապահովագրության գործը կարձ ժամանակում զլուկաբերել:

Նշանակում ե, վոր Խորհրդային պետության ապահովագրությունը վոչ թե մի առանձին հանրապետության կամ առանձին նահանգի սեփական գործն ե, այլ ամբողջ Խորհրդային Միության: Նրա մեջ մասնակցուան ե վոչ թե միայն Հայաստանի 1—1,500,000 ժողովուրդը, այլ ամբողջ Միության 130—140,000,000 ժողովուրդը:

Իսկ մենք զիտենք վոր ինչքան շատ մարդ մասնակցի ապահովագրության գործում, այնքան նաև ամուլ կլինի, միջոցներով հարուստ և ոգտակար, Խորհրդային Պետապը ամենահարուստն եւ և ուժեղը մինչեւ այժմ յեղած ապահովագրական ընկերություններից:

Կարող են շատերը զարմանալ և հարց տալ, թե ինչու Պետապը այդքան խոշոր գումարներ առանց շահվեցնելու թողնում է վեր ընկած բաներում:

Բայց դա սխալ է. Պետապի փողերը անպետք տեղը թափանակ չեն բանկերում:

Պետությունը այդ բանկերի միջոցով փողերը գործադրության մեջ եւ դնում, նրանցով գյուղական տնտեսությունը և արդյունաբերությունն եւ զարգացնում. մի խորքով գործածում է իր յերկրի առաջադիմության համար:

Իսկ Պետապը ուզած ժամանակ կարող է իր ուզած փողը ստանալ բանկից, փորունական կում միայն Պետապի փողերը չեն. այնտեղ միշտ ել պատրաստի զրամ կա:

Այժմ գյուղատնտեսական բանկ է բացված, վորի նպատակն է գյուղացիներին վարկ (պարտք) տալ՝ դյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ, գործարաններ, անասուններ, սերմացու և այլն ձեռք բերելու համար:

Խոսք չկա, վոր Պետապը իր ազատ փողերը պիտի պահ տա այդ բակին. Կնշանակի զյու-

ղացին Ելի ինքն ե ոգտավում վոչ միայն պատահարների վնասների ժամանակ, այլ և բանկի միջոցով իր տնտեսությունը հարստացնելու, զարգացնելու համար:

Ապահովագրաբներից հավաքված վողերի մեծ մասը Պետապը վճարում է կարկտից, անասունների հիվանդություններից, կրակից վընասվածներին ոգնելու համար: Այդ փողերի մի փոքրիկ մասն ել ծախսում է գործակալությունների, կենտրոնական զբանենյակի և այլն կազմակերպչական անհրաժեշտ կարիքների վրա:

Իսկ ինչ են անում, յեթե այդ բոլոր ծախսերը հոգալուց հետո ավելորդ փող և մնում:

Այդ ազատ մնացած փողերի ոգնությամբ Պետապը աշխատում է մի ուրիշ նոր փորձանքի դեմ ել ապահովագրություն մտցնել, յեղած ապահովագրությունների համար ապահովագրաները իջեցնել և ապահովագները (վնասի գումարները) բարձրացնել, ոգտակար զրքեր և թերթեր տպել, անասունների հիվանդությունների դեմ կովելու համար միջոցներ ձեռք բերել, անասնաբուժերի կազմը ուժեղացնել և այլ այդպիսի ոգտակար գործեր կատարել:

Ինչ ասել կուզի, վոր այդպիսի խոշոր գործում պետք է կանոնավոր խիստ հաշվի պահպե և շուտ-շուտ ստուգումներ կատարվեն:

Գործակալը ամեն մեկ ստացած փողի հա-

մար անգորբագիր ե (կվիտանցյա) տալիս, վորի արժատը պահում ե իր մոռը: Ստուգում կատարելու ժամանակ կարելի յե հեշտությամբ իմանալ, թե նա վորքան ե փող հավաքել: Բացի այդ՝ Պետապի ամեն մի զրամենյակում և գործակալի մոռ հատուկ զրքեր կան, վորտեղ զըրվում են մուտքն ու յելքը, այսինքն՝ ստացած և ծախսված փողերը: Պետապը տեսուչներ, ըլնախճներ ե ուղարկում շրջանները՝ դավառական և շրջանային գործակալների հաշիվներն ու գործերը քննելու համար:

Պետապի Գլխավոր վարչությունն ել իր կողմից տեսուչներ ուղարկում ե առանձին հահանգների կամ հանրապետությունների Պետապի գործերը ստուգելու համար:

Այսպիսով ապահովագներից հավաքված և ծախսված ամեն մի կոպեկի խիստ հաշիվը պահպահ ե: Այդ կոպեկների հետ կապ ունեցող ամեն մի ծառայողի և հիմնարկության վրա նըշշանակած ե հակոսություն: Ամենքը պարտավոր են ժամանակին մանրամասն հաշիվ ներկայացնել: Գրուզական գանձողը՝ գործակալին, գործակալը՝ Պետապին, Պետապը Գլխավոր վարչության: Ամեն մեկը սրենքով պատսախանատույե իրեն հանձնված աշխատանքները ճշությամբ և ազնվությամբ կտարելու համար:

Վորքան ել խիստ և դրված հաշվապահու-

թյունը և ամեն աշխատակցի պատասխանատվության գործը, բայց ելի զեղծումների զեպքեր յեղել են: Այդպիսի դեպքեր բացվելիս մեղավորը անմիջապես դատի յե հանձնվում և իր արժանի պատիժն ստանում:

Եման հանցանքների առաջն առնելու համար բնակչությունը ինքը պետք ե ոգնի Պետապին: Գյուղացիները և ամենքը պետք ե աչքաբաց լինեն և տեղն ու աեղը բոնեն այդ տեսակի անպիտաններին և խակույն հայտնեն, ում վոր պետք ե: Նրանք պետք ե չմոռանան, վոր Պետապի ունեցածը իրենցն ե և նրանից գոլացողը՝ դյուղացուն և թալանում:

Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՍՏԱՆԱԼ ՎՆԱՍԻ Ա- ՊԱՇՈՎԱԳԻՆԸ

Ապահովագինը առանց ուշանալու, ժամանակին սատնալու համար ամենքը պետք ե լավի իմանան ապահովագրության օրենքներն ու կանոնները և ճշառությամբ կատարեն:

Յեթե մեկը չիմանա այդ կանոններ և մի ուրիշից առնի, որինակ, ապահովագրված անսառունը, առանց այդ մասին Պետապի գործակալին հայտնելու և հանկարծ այդ անասունը սատկի, նա չպիտի կարողանա զրա վնասը (ապահովագինը) ստանալ ինչու. վորով ետե դուրս կը, վոր այդ անասունի ապահովագրական բոլոր փաստաթղթերը (գոկուգինաները) մնացել են

առաջիկա տիրոջ անունով: Իսկ Պետապը խո չի կարող Սիմոնի անունով գրված անասունի փողը Աստուրին տալ:

Ապահովագրված ապրանքի — անասունի, ցանքսի, շենքի — դիմին փորձանք պատահելիս պետք ե այսպէս անել.

1. Կարկատը ցանքսին խփելուն պես ապահովագրողը (ցանքսի տերը) պարտավոր ե ամենաուշը Յ որվա մեջ հայտնել Պետապի գործակալին, կամ յեթե նո հեռու յե, տեղական իշխանության (շըջորկոմին, գյուղխորհղին):

2. Ապահովագրված անասունը ստակելիս, տերը պարտավոր ե 24 ժամվա մեջ հայտնել անասունաբուժին կամ բուժակին (ֆելդշերին) և Պետապի գործակալին, կամ տեղական իշխանության: Դեռ մինչեւ ոտակելը, հենց վոր անասունը հիվանդանա, այդ մասին պիտի հայտնել այդ նույն մարմիններին և անձերին:

3. Շենքը վառվելիս, ապահովագրողը պարտավոր ե ամենաուշը Յ որվա մեջ հայտնել գործակալին, ներկայացնելով տեղական իշխանության տված վկայականը այն մասին, վոր շենքը դիտմամբ չի կրակ ձգուծ և ապահովագրողը գիտամբ կրակ ձգելու մեջ չի կասկածվում:

4. Ցեղած պատահարների և կնաների մասին գործակալը պարտավոր ե արձանագրություն կազմել առանց ուշացնելու:

ա). Կարկատահարության դեպքում վոչ ուշ

քան հունձքից 15 որ առաջ կամ ամենաուշը բերքը հավաքել սկսելը: Յեթե ապահովագրողի կորուսաը շատ մեծ ե, նո կարող ե պահանջել, վոր իր վնասը շուտ տան (շատապողական հատույում վնասի), այդ դեպքում արձանագրությունը պետք ե կազմվի հայտաբարություն ստանալուց ամենաուշը մինչեւ 10 որ ժամանակում: Յեթե կարկուտը այդիներին խփում ե նրանց ծաղկելու ժամանակ, արձանագրությունը պետք ե կազմվի կարկատից շատ-շատ չ որ հետո:

բ). Սատկած անասունի մասին արձանագրը ըստ թյունը պետք ե կազմվի սատկելուց 2 որվա ընթացքում, իսկ ձմեռները (նոյեմբերի 1-ապրիլի 1) ամենաշատը 4 որվա մեջ: Այս արձանագրությունը պետք ե կազմեն անասունաբուժը և գործակալը, իսկ գործակալի բացակայության դեպքում պետք ե դիմել տեղական (քաղաքային, գյուղական, շըջանային) իշխանություններին, վորոնք պարտավոր են այդ բանը անել:

գ). Հրդեհի դեպքում արձանագրությունը պիտի կազմված լինի հայտաբարությունը տալուց ամենաուշը չ որ հետո:

դ. Ապահովագրողը իրավունք ունի պահանջելու, վոր իր վնասը վճարվի արձանագրությունը կազմելուց ամենաուշը մեկ ամիս հետո:

Կան դեռ ուրիշ կարեվոր կանոններ, վորոնց հետ պետք ե լավ ծանոթանալ հատուկ

մանրամասն կանոնագրության միջոցով (տես
գրքույթի № 5)

Ինչպես դրամական ամեն մի գործ, ապա-
հովագնի վճարելն ել լուրջ և պատասխանատու
խնդիր եւ. Պետք է ամեն մի փաստաթուղթ կազ-
մված լինի որենքի համեմատ, վրուինետե գոր-
ծակալը պատասխանատու յե որենքի առաջ իր
ծախսած ամեն մի կոպեկի համար. Ամենքը պետք
է ոգնեն նրան, ճիշտ ու ժամանակին տեղեկու-
թյունները տալով, վ ըպեսզի ճեշտ ու ա-
րագ կերպով կատարվի գնաների հատուցումը:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎԵՐԱԲԵՐՎԵԼ ՊԵՏԱ-
ՊԻՆ.

ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐԿԱՆՈՆՆԵՐԸ

(Տես ապահովագրողի գրադարանի № 4 գրո-
բույկը):



ՀՀ Ազգային գրադարան



NL0213879

ԳԻՆՆ Ե' 5 ԿՈԹ.

«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ»
ՀԱՅՈՒՏԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ ե Պետական Ապահովագրությունը:
2. Պետական Ապահովագրության տեսակները:
3. Պետապը ի՞նչ ե վերցնում զյուղացուց և ի՞նչ ե տալիս նրան:
4. Ի՞նչպես պետք ե վերաբերվել Պետապին. Ապահովագրության գլխավոր կանոնները:
5. Հայպետապը ի՞նչ ե արել և ի՞նչ ունի անելու զյուղում:

— — — — —